# Ինչու են աղմկում սահմանները

> Այն երկիրը, որ չի պահում իր զինվորներին, հարկադրված կպահի ուրիշներին:
>
> *Նապոլեոն*

Վերջին երեք տարում ամենից շատ կրկնվող երկու բառակապակցություն՝ «չհայտարարված պատերազմ» և «հարաբերական անդորր», թյուրիմացության դրսևորումն են վարչախմբի և նրան նմանակող քաղաքական խոսնակների, մամուլի:

Երբ գրավվում ու փրվում են տարածքներ, հեծում, պեղաիան են լինում բնակչության հսկայական զանգվածներ, զոհվում են մարտիկներ, սպանվում են երեխաներ, կանայք, ծերեր...

Սա պատերազմ է

Բնական է, որ թշնամին մարտավարության միջոցների մեջ խտրություն չի դնում: Իսկ ինչ անում տալ ներքին թշնամուն. դավաճա՞ն, ոչ դրանից էլ վատթարը՝ Միաղ, որը խորանում է անշեղորեն, ժողովրդի կեղեքումը հասցնում դիակապտության:

Գյոթեն ասել է. «Ավելի լավ է անարդարություն, քան անկարգություն»: Իսկ մեզանում այս երկու բացասական երևույթները հանդես են գալիս նույն հայտարարով՝ անիշխանություն:

... Սա պատերազմ է՝ և՛ ներսից, և՛ դրսից: Իսկ սխալները դառնում են անուղղելի:

Եւ այսուհանդերձ հարաբերական անդորր հասկացությունը մնում է թերթերի էջերում, հնչում ռադիոյով, հեռուստատեսությամբ: Մինչդեռ... ծածկադմփոցով երկիր չես պահի:

Անժխտելի է, որ կամա-կամա հայտնվել ենք հզորների քաղաքականության կիզակետում: Բայց ստացվել է, որ Արցախյան հանգույցը կարևորում է հսկա մեքենայի անխափանությունը: Ռատի ակամա հաշվից դուրս է... Մի կաթիլ մեղրի երեսից աշխարհ ավերվեց:

Եթե քննադատելը դյուրին է համարվում, ապա ասողին էլ լսող է պետք:

Հարաբերական անդորրում գտնվող սահմանների ապահովության կապակցությամբ բազմիցս նստակառաջարկներ են եղել, մասնավորապես տեղական ուժերով կայազորներ ստեղծելը: Միայն չպիտի մոռանալ խաղաղ ժողովրդին զենք վստահելուց: Իսկ պետության գործը կլինի համապատասխան զորամիավորումներին ապահովել որակյալ սպաներով, զինամթերքով և հոգատար հսկողությամբ:

Սահմանամերձ շրջանների մեծ մասը չունի ռադիոկապ, որի ռազմաստրատեգիական նշանակությունը բացառիկ է, իսկ ինֆորմացիայի մնացած միջոցների մասին երազելն էլ է շքեղություն դարձել:

Շատ տեղերում գոյամարտի միակ միջոցը դեռևս ինքնագործունեությունն է: Կռվողները զուրկ են տարրական միջոցներից: Տնայնագործական եղանակով զրահամեքենաների դեմ գործածարտելը սովորական բան է դարձել: Մի օրինակ: Սնքարում Վաչագան Չիբուխչյանը վիլիսը քշեց տանկին ընդառաջ: Հակառակորդը շշմեց... Դահը կորցված էր: Հրաշավոր մեքենան շարքից դուրս բերվեց շահած վայրկյանների շնորհիվ:

... Մեր կողքին, դաժան անտարբերության գրկում լեգենդներ են անէանում, որոնք սակայն լցնում են բոլոր անջրպետները...

Փառք ընկածների հիշատակին, որոնցից շատերի անշնորհակալությունը կապշեցներ անգամ կասկադյորներին:

Խիզախությունը երբ անցնում է անհնարների սահմանը, անկորուստ չի լինում:

Դարչյալ փառք գնացածներին:

... Իսկ ողջ մնացածնե՞րը:

Ցավոք սնքարեցի Սամվել Հովսեփյանի օրինակը միակը չէ: Մասնակցել է մարտական շատ գործողությունների, օրինակ դարձել ջահելների համար:

... Ծանր վիրավորվել է, կորցրել լսողությունը: Երեք երեխաների հայր է: Ընտանիքի հոգսի մի մասն իր վրա է վերցրել գյուղի համայնքը:

Եւ ամենուրեք տեղական իշխանությունների <մատի փաթաթանը> աչքը Երևանին տնկելն է մնացել, իսկ մայրաքաղաքում կշիռ ունեցող համերկրացի ունենալը՝ կենցաղ աղբյուր:

Իսկ պղտորած ժամանակներում կորչում են անուններ, համեմատաբար սպասելով բարոյականության զուլալմանը:

Սամվելների մասին պիտի մտածի պետությունը, եթե միտում ունի այդ կոչմանը:

**Լևոն Մարգարյան**